Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ

Քննական առարկա 3

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ

Քննաթերթ

Հարցեր 1-25	*50 միավոր*
Խնդիր 1	*13 միավոր*
Խնդիր 2	*13 միավոր*
Խնդիր 3	*14 միավոր*
Խնդիր 4	*10 միավոր*
Ընդամենը	***100 միավոր***

Հունվար, 2024թ.

Բաժին Ա

Բազմակի ընտրության 25 հարց, յուրաքանչյուր հարցի ճիշտ պատասխանը գնահատվում է 2 միավոր:

1. **Պարտապան իրավաբանական անձի լուծարման հանձնաժողովը (լուծարողը) պարտավոր է պարտապանին սնանկ ճանաչելու դիմում ներկայացնել դատարան, եթե լուծարման ժամանակ պարզվում է, որ.**

ա) լուծարվող իրավաբանական անձի անշարժ գույքի գնահատված արժեքը փոքր է ներկայացված պահանջներից.
բ) լուծարվող իրավաբանական անձի գույքի արժեքն անբավարար է պարտատերերի պահանջներն ամբողջովին բավարարելու համար.
գ) լուծարվող իրավաբանական անձի գույքի արժեքը նվազագույն աշխատավարձի հազարապատիկից ավելի չափով փոքր է պարտավորությունների մեծությունից.
դ) լուծարվող իրավաբանական անձը չունի առողջանալու հնարավորություն:

2. **Կապալի պայմանագրով աշխատանքը կատարվում է.**

ա) Պատվիրատուի ուժերով, նյութերով և միջոցներով, եթե այլ բան նախատեսված չէ կապալի պայմանագրով.
բ) Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով, եթե այլ բան նախատեսված չէ կապալի պայմանագրով.
գ) Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով՝ առանց բացառության.
դ) Պատվիրատուի ուժերով, նյութերով և միջոցներով:

3. **Այն դեպքում, երբ աշխատանքի արդյունքի համար երաշխիքային ժամկետ չի սահմանվել, պատվիրատուն կարող է աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել՝ պայմանով, եթե դրանք հայտնաբերված լինեն ողջամիտ ժամկետում, սակայն աշխատանքի արդյունքը հանձնելու օրվանից.**

ա) **մեկ տարվա** սահմաններում, եթե այլ ժամկետ սահմանված չէ օրենքով, պայմանագրով կամ գործարար շրջանառության սովորույթներով.
բ) **երկու տարվա** սահմաններում, եթե այլ ժամկետ սահմանված չէ օրենքով, պայմանագրով կամ գործարար շրջանառության սովորույթներով.
գ) **երեք տարվա** սահմաններում, եթե այլ ժամկետ սահմանված չէ օրենքով, պայմանագրով կամ գործարար շրջանառության սովորույթներով.
դ) **չորս տարվա** սահմաններում, եթե այլ ժամկետ սահմանված չէ օրենքով, պայմանագրով կամ գործարար շրջանառության սովորույթներով:

4. Արտաժամյա աշխատանքներին չեն ներգրավվում՝

ա) մինչև 18 տարեկան աշխատողները.
բ) առանց արտադրությունից կտրվելու՝ հանրակրթական և մասնագիտական դպրոցներում սովորող աշխատողները դասերի օրերին.
գ) առողջության համար վնասակար և (կամ) վտանգավոր գործոնների ազդեցության պայմաններում աշխատողները.
դ) Բոլոր պատասխանները ճիշտ են:

5. Անգործունակ ճանաչված (անգործունակ միայն դատական կարգով կարող է ճանաչվել) քաղաքացու անունից գործարքներ է կնքում նրա.

ա) հոգաբարձուն.
բ) ծնողը.
գ) խնամակալը.
դ) ընտանիքի չափահաս անդամը:

6. Ժամանակավոր աշխատանքային պայմանագիրը.

ա) մինչև վեց ամիս ժամկետով կնքվող աշխատանքային պայմանագիրն է.
բ) մինչև երեք ամիս ժամկետով կնքվող աշխատանքային պայմանագիրն է.
գ) մինչև մեկ ամիս ժամկետով կնքվող աշխատանքային պայմանագիրն է.
դ) մինչև երկու ամիս ժամկետով կնքվող աշխատանքային պայմանագիրն է:

7. Բաժնետոմսեր թողարկելու իրավունք ունեն.

ա) Ինչպես սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունները, այնպես էլ բաժնետիրական ընկերությունները.
բ) Ընկերություններն ու ընկերակցությունները.
գ) Միայն բաժնետիրական ընկերությունները
դ) Բոլոր պատասխանները սխալ են:

8. Գործարքի հասարակ գրավոր ձևը չպահպանելը.

ա) վեճի դեպքում կողմերին զրկում է գրավոր և այլ ապացույցներ ներկայացնելու իրավունքից.
բ) հանգեցնում է այդ գործարքի առոչինչության.
գ) վեճի դեպքում կողմերին զրկում է ի հաստատումն գործարքի ու նրա պայմանների՝ գրավոր և այլ ապացույցներ ներկայացնելու, սակայն նրանց չի զրկում վկաների ցուցմունքներ վկայակոչելու իրավունքից:

դ) վեճի դեպքում կողմերին զրկում է ի հաստատումն գործարքի ու նրա պայմանների՝ վկաների ցուցմունքներ վկայակոչելու, սակայն նրանց չի զրկում գրավոր և այլ ապացույցներ ներկայացնելու իրավունքից:

9. Ո՞ր պնդումն է սխալ <<Քաղաքացիական իրավունքների օբյեկտներ են՝

ա) գույքը՝ բացառությամբ դրամական միջոցների, արժեթղթերի և գույքային իրավունքների>>.
բ) աշխատանքները և ծառայությունները>>.
գ) տեղեկատվությունը>>.
դ) ոչ նյութական բարիքները>>:

10. Որո՞նք են վճարային արժեթղթերը.

ա) Պարտատոմսը, բաժնետոմսը և ներդրումային ֆոնդի փայը
բ) Չեկը, հասարակ մուրհակը և փոխանցելի մուրհակը
գ) Կոնոսամենտը, երկակի պահեստային վկայագիրը և հասարակ պահեստային վկայագիրը
դ) Չեկը, հասարակ մուրհակը և հասարակ պահեստային վկայագիրը:

11. Նշված տարբերակներից ո՞րն է ճիշտ

ա) Եթե պայմանագիրը չկատարելու համար պատասխանատու է նախավճար տված կողմը, այն վերադարձվում է: Եթե պայմանագիրը չկատարելու համար պատասխանատու է նախավճար ստացած կողմը, նա պարտավոր է մյուս կողմին վճարել նախավճարի գումարի կրկնապատիկը:
բ) Եթե պայմանագիրը չկատարելու համար պատասխանատու է նախավճար տված կողմը, այն մնում է մյուս կողմին: Եթե պայմանագիրը չկատարելու համար պատասխանատու է նախավճար ստացած կողմը, նա պարտավոր է մյուս կողմին վճարել նախավճարի գումարը:
գ) Եթե պայմանագիրը չկատարելու համար պատասխանատու է նախավճար տված կողմը, այն մնում է մյուս կողմին: Եթե պայմանագիրը չկատարելու համար պատասխանատու է նախավճար ստացած կողմը, նա պարտավոր է մյուս կողմին վճարել նախավճարի գումարի կրկնապատիկը:
դ) Եթե պայմանագիրը չկատարելու համար պատասխանատու է նախավճար տված կողմը, այն մնում է մյուս կողմին: Եթե պայմանագիրը չկատարելու համար պատասխանատու է նախավճար ստացած կողմը, նա պարտավոր է մյուս կողմին վճարել նախավճարի գումարի եռապատիկը:

12. Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մասնակիցները.

ա) պատասխանատու չեն նրա պարտավորությունների համար և իրենց ներդրած ավանդների արժեքի սահմաններում կրում են ընկերության գործունեության հետ կապված վնասների ռիսկը.
բ) պատասխանատու են նրա պարտավորությունների համար և իրենց ներդրած ավանդների արժեքի սահմաններում կրում են ընկերության գործունեության հետ կապված վնասների ռիսկը.
գ) ընկերության պարտավորությունների համար կրում են համապարտ սուբսիդիար պատասխանատվություն.

դ) ընկերության պարտավորությունների՝ իրենց ներդրումներին համարժեք մասի համար կրում են համապարտ սուբսիդիար պատասխանատվություն:

13. Գրավի տեսակներից են՝

ա) դրամական միջոցների գրավը, հիփոթեքը.
բ) կոշտ գրավը, շրջանառության մեջ գտնվող ապրանքների գրավը.
գ) գրավականը, գրավատուն հանձնված գույքի գրավը, իրավունքների գրավը.
դ) բոլոր պատասխանները ճիշտ են:

14. Ամենօրյա աշխատաժամանակի տևողությունը.

ա) չի կարող անցնել ութ աշխատանքային ժամից՝ առանց բացառության.
բ) չի կարող անցնել ութ աշխատանքային ժամից, բացառությամբ սույն օրենսգրքով, օրենքով, այլ իրավական ակտերով նախատեսված դեպքերի.
գ) չի կարող անցնել տասը աշխատանքային ժամից, բացառությամբ սույն օրենսգրքով, օրենքով, այլ իրավական ակտերով և կոլեկտիվ պայմանագրով նախատեսված դեպքերի.
դ) չի կարող անցնել վեց աշխատանքային ժամից:

15. Նշված պնդումներից ո՞րն է ճիշտ

ա) Դուստր ընկերությունը պատասխանատվություն է կրում հիմնական ընկերակցության կամ ընկերության պարտքերի համար.
բ) Դուստր ընկերությունը պատասխանատվություն չի կրում հիմնական ընկերակցության կամ ընկերության պարտքերի համար.
գ) Դուստր ընկերությունը պատասխանատվություն է կրում հիմնական ընկերակցության կամ ընկերության պարտքերի համար, եթե հիմնական ընկերակցության կամ ընկերության միջև առկա է գրավոր համաձայնություն.
դ) Դուստր ընկերությունը պատասխանատվություն է կրում հիմնական ընկերակցության կամ ընկերության պարտքերի համար, հիմնական ընկերակցությունը կամ ընկերությունը դուստր ընկերության համար պատասխանատվություն չի կրում:

16. Եթե ակտը բողոքարկվել է վարչական և դատական կարգով միաժամանակ, ապա.

ա) բողոքը ենթակա է վարչական մարմնում քննության, որի դեպքում դատարանում հարուցված վարույթը կասեցվում է:
բ) բողոքը ենթակա է վարչական մարմնում քննության, որի դեպքում դատարանում հարուցված վարույթը կարճվում է:
գ) բողոքը ենթակա է դատական քննության, որի դեպքում վարչական մարմնում հարուցված վարույթը կասեցվում է:

դ) բողոքը ենթակա է դատական քննության, որի դեպքում վարչական մարմնում հարուցված վարույթը կարճվում է:

17. Կառուցապատման իրավունքը, եթե օրենքով ավելի կարճ ժամկետ նախատեսված չէ, տրամադրվում է պայմանագրով սահմանված ժամկետով և չի կարող գերազանցել.

ա) 20 տարին.
բ) 99 տարին.
գ) 100 տարին.
դ) 10 տարին:

18. Ո՞րն է ձեռնարկատիրական գործունեությունը.

ա) անձի ինքնուրույն, իր ռիսկով իրականացվող գործունեությունը, որի հիմնական նպատակը գույք օգտագործելուց, ապրանքներ վաճառելուց, աշխատանքներ կատարելուց կամ ծառայություններ մատուցելուց շահույթ և (կամ) եկամուտ ստանալն է:
բ) անձի ինքնուրույն, սեփական միջոցներով և իր ռիսկով իրականացվող գործունեությունը, որի միակ նպատակը գույք օգտագործելուց, ապրանքներ վաճառելուց, աշխատանքներ կատարելուց կամ ծառայություններ մատուցելուց շահույթ ստանալն է:
գ) անձի ինքնուրույն, իր ռիսկով իրականացվող գործունեությունը, որի հիմնական նպատակը գույք օգտագործելուց, ապրանքներ վաճառելուց, աշխատանքներ կատարելուց կամ ծառայություններ մատուցելուց շահույթ ստանալն է:
դ) անձի ինքնուրույն, սեփական միջոցներով և իր ռիսկով իրականացվող գործունեությունը, որի նպատակը գույք օգտագործելուց, ապրանքներ վաճառելուց, աշխատանքներ կատարելուց կամ ծառայություններ մատուցելուց շահույթ ստանալն է:

19. Նշվածներից որը վստահությունը կորցրած աշխատողի հետ աշխատանքային պայմանագրի լուծման հիմք չէ.

ա) հրապարակել է պետական և ծառայողական գաղտնիքներ կամ դրանց մասին հայտնել է մրցակից կազմակերպությանը:
բ) ուսումնադաստիարակչական գործառույթներ իրականացնող աշխատողը թույլ է տվել տվյալ աշխատանքը շարունակելու հետ անհամատեղելի արարք.
գ) դրամական կամ ապրանքային արժեքներ սպասարկելիս կատարել է այնպիսի արարքներ, որի հետևանքով գործատուն կրել է նյութական վնաս.
դ) աշխատանքի ընդունվելիս ներկայացրել է կեղծ փաստաթղթեր:

20. Ո՞րը չի ներառում աշխատաժամանակը.

ա) որպես զինվորական ծառայության մեջ չգտնվող անձ (կամավորական)՝ կամավորական հիմունքներով Հայաստանի Հանրապետության, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կամ

պաշտպանության ոլորտում պետական լիազոր մարմնի հետ ռազմական փոխօգնության պայմանագրերի հիման վրա այլ երկրների պաշտպանության մարտական գործողություններին մասնակցելու ժամանակահատվածը:
բ) գործուղման ժամանակահատվածը.
գ) պարապուրդի ժամանակահատվածը.
դ) օրենքով, կոլեկտիվ պայմանագրով կամ ներքին իրավական ակտերով սահմանված այլ ժամանակահատվածներ.

21. Փոխառության պայմանագիրը կնքված է համարվում՝

ա) Պայմանագիրը կնքելու պահից.
բ) Դրամ կամ այլ գույք հանձնելու պահից.
գ) Ցանկացած եղանակով գրավոր համաձայնություն ձեռքբերելու պահից.
դ) Պայմանագիրը ստորագրելու պահից:

22. Բաժնետիրական ընկերությունում խոշոր գործարք կնքելու մասին որոշումը ընդունում է.

ա) Խորհուրդը՝ դրան մասնակցող խորհրդի անդամների ձայների 3/4-ով:
բ) ժողովը՝ դրան մասնակցող բաժնետերերի (քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի) ձայների առնվազն կեսով:
գ) Խոշոր գործարք կնքելու մասին որոշման ընդունման անհրաժեշտություն չի լինում:
դ) ժողովը՝ դրան մասնակցող բաժնետերերի (քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի) ձայների 3/4-ով, եթե Ընկերության կանոնադրությամբ ձայների առավել մեծ քանակ սահմանված չէ:

23. Նշված տարբերակներից ո՞րն է սխալ

ա) Տիրապետման իրավունքը գույքը փաստացի տիրապետելու իրավաբանորեն ապահովված հնարավորությունն է:
բ) Տնօրինման իրավունքը գույքի ճակատագիրը որոշելու փաստացի ապահովված հնարավորությունն է:
գ) Օգտագործման իրավունքը գույքից դրա օգտակար բնական հատկությունները քաղելու, ինչպես նաև դրանից օգուտ ստանալու իրավաբանորեն ապահովված հնարավորությունն է: Օգուտը կարող է լինել եկամտի, պտուղների, աճի, ծնաճի և այլ ձևերով:
դ) Տնօրինման իրավունքը գույքի ճակատագիրը որոշելու իրավաբանորեն ապահովված հնարավորությունն է:

24. Գործատուի մոտ փորձնակների թիվը չի կարող գերազանցել.
ա) տվյալ պահին աշխատողների թվի հինգ տոկոսը, բայց ոչ պակաս, քան մեկ տոկոսը.
բ) տվյալ պահին աշխատողների թվի տասը տոկոսը.
գ) տվյալ պահին աշխատողների թվի տասնհինգ տոկոսը, բայց ոչ պակաս, քան երկու տոկոսը.

դ) տվյալ պահին աշխատողների թվի քսան տոկոսը:

25. Ո՞ր պնդումն է սխալ.

Գործատուն իրավունք ունի աշխատողի հետ լուծելու անորոշ ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը, ինչպես նաև որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը նախքան դրա գործողության ժամկետի լրանալը՝

ա) գործատուի լուծարման (գործունեության դադարման), պետական հաշվառումից հանվելու, նոտար գործատուի դեպքում՝ պաշտոնից ազատվելու դեպքերում.
բ) աշխատանքի ծավալների և (կամ) տնտեսական և (կամ) տեխնոլոգիական և (կամ) աշխատանքի կազմակերպման պայմանների փոփոխման և (կամ) արտադրական անհրաժեշտությամբ պայմանավորված՝ աշխատողների քանակի և (կամ) հաստիքների կրճատման դեպքում.
գ) աշխատողի նկատմամբ վստահությունը կորցնելու դեպքում.
դ) աշխատողի երկարատև անաշխատունակության դեպքում (եթե աշխատողը ժամանակավոր անաշխատունակության մեջ է գտնվել ավելի քան երկու ամիս անընդմեջ կամ վերջին տասներկու ամսվա ընթացքում՝ ավելի քան 60 օր՝ չհաշված հղիության և ծննդաբերության արձակուրդի օրերը).

Ընդամենը 50 միավոր

ԲԱԺԻՆ Բ. ԲՈԼՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՊԱՐՏԱԴԻՐ ԵՆ

Խնդիրների լուծման հիմքում պետք է դրվեն 2023 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ գործող իրավական կարգավորումները՝ անկախ այդ խնդիրներում հղում կատարված տարեթվերից:

Խնդիր 1 /13 միավոր/

Արմեն Կարապետյանը (այսուհետ նաև՝ Աշխատող) աշխատում էր «Ֆասթ Ըքաունթինգ» ՓԲԸ-ում (այսուհետ՝ Գործատու) որպես հաշվապահ: Գործատուն հաշվապահական հաշվառման, խորհրդատվական կազմակերպություն էր: Աշխատողի աշխատանքային պարտականությունն էր Գործատուի հաճախորդների հաշվապահական հաշվառումը իրականացնելը, հաճախորդներին հարկային օրենսդրության վերաբերյալ խորհրդատվություն տրամադրելը:

Գործատուն յուրաքանչյուր տարի կազմակերպությունում իրականացնում է ներքին մոնիթորինգ, որպեսզի կարողանա առավել ուժեղացված վերահսկողության միջոցով խուսափելու աշխատակիցների կողմից ցանկացած տեսակի զերծարարությունից, տեղեկատվության (այդ թվում՝ գաղտնի) հրապարակումից:

15.09.2022 թվականին Գործատուի անվտանգության աշխատակիցը աշխատանքի վայրի տեսախցիկների միջոցով նկատում է, որ Արմեն Կարապետյանը 2022 թվականի սկզբից սկսած մինչև 2022 թվականի սեպտեմբեր 12-ը ներառյալ յուրաքանչյուր օր իր գործընկեր մեկ այլ աշխատակից Աննա Աբրահամյանի համակարգչով մուտքագրելով համապատասխան մուտքանունը և գաղտնաբառը կարողացել է մուտք գործել Գործատուի հաճախորդերի բազա՝ տիրապետելով ամբողջ հաճախորդների բազային: Աննա Աբրահամյանը Գործատուի մոտ աշխատում էր որպես

մենեջեր: Անվտանգության աշխատակցի այն հարցին, թե ինչ նպատակ էր հետապնդում Արմեն Կարապետյանի կողմից հաճախորդների բազային տիրապետելը, Արմեն Կարապետյանը պատասխանել է. «... իրականում ես այդ տեղեկատվությունը որևէ մեկին չեմ տրամադրում, պարզապես ցանկանում էի ամբողջական տեղեկանալ հաճախորդների ցանկին»:

Տնօրենը, տեղեկանալով այդ մասին, 11.10.2022 թվականին հարուցում է կարգապահական վարույթ: Աշխատողը արձակուրդում է գտնվել 13.09.2022 թվականից մինչև 13.10.2022 թվականը, իսկ 14.10.2022 թվականից մինչև 20.10.2022 թվականը չվճարվող արձակուրդում: Կադրերի բաժինը 12.10.2022 թվականին աշխատողին ուղարկում է դեպքի մասին գրավոր բացատրություն ներկայացնելու վերաբերյալ գրություն՝ բացատրություն ներկայացնելու համար սահմանելով 3 աշխատանքային օր ժամկետ: Աշխատողը 14.10.2022 թվականին ստանալով գրությունը՝ որևէ ձևով չի արձագանքում դրան: 21.10.2022 թվականին Գործատուի տնօրենն ընդունում է աշխատողին աշխատանքից ազատելու մասին հրաման: Աշխատողը վիճարկում է այդ հրամանը դատարանում՝ նշելով, որ ինքը որևէ խախտում թույլ չի տվել, կարգապահական վարույթի ամբողջ ընթացքում գտնվել է արձակուրդում, իսկ կարգապահական վարույթ չի կարող հարուցվել իր արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում, բացի այդ նշել է, որ չի ծանուցվել նախքան աշխատանքից ազատվելը, ինչպես նաև՝ վաղուց անցել են կարգապահական պատասխանատվության ենթարկելու ժամկետները և օրենքով չկա աշխատանքից ազատման նման հիմք:

Հարց 1. Ներկայացրեք կողմերի միջև առկա իրավահարաբերությունների բնույթը: Օրինական են արդյո՞ք գործատուի գործողությունները: Իրավաչափ են արդյո՞ք աշխատողի պնդումները: Հիմնավորե՛ք Ձեր պատասխանը: /8 միավոր/

Հարց 2. Թվարկեք գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագրի լուծման հիմքերը և լուծման համար արգելք հանդիսացող հանգամանքները: / 5 միավոր/

Խնդիր 2 /13 միավոր/

«Օլդ Ավենյու» ՓԲԸ-ի (Ընկերություն) կանոնադրական կապիտալի թվով 90 բաժնետոմսերը սեփականատերերի միջև բաշխված են հետևյալ կերպ. Արա Նավասարդյան՝ 11 բաժնետոմս, Նորիկ Կիրակոսյան՝ 7 բաժնետոմս, Գոռ Համբարձումյան՝ 29 բաժնետոմս, Վիգեն Նիկողոսյան՝ 23 բաժնետոմս, Ազատ Եղիազարյան՝ 20 բաժնետոմս 2023 թվականի մարտի 1-ին տեղի է ունենում Ընկերության բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովը, որին մասնակցում են Ընկերության բոլոր բաժնետերերը՝ բացառությամբ Ազատ Եղիազարյանի, ով երկրում չլինելու պատճառով չի կարողանում մասնակցել ժողովի աշխատանքներին, սակայն Վիգեն Նիկողոսյանին տրամադրում է լիազորագիր՝ ժողովում իր շահերը ներկայացնելու համար: Ժողովի նիստի ժամանակ Ընկերության տնօրենը նշում է, որ Ընկերության ակտիվները կազմում են 4,4 միլիարդ ՀՀ դրամ, ընթացիկ տարվա զուտ շահույթը՝ 513 միլիոն ՀՀ դրամ: Գործունեության մանրամասն ներկայացումից պարզ է դառնում, որ 2022թ. դեկտեմբերի 23-ին 423 միլիոն ՀՀ դրամ հաշվեկշռային արժեքով Ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքը 463 միլիոն ՀՀ դրամով վաճառվել է Ընկերության խորհրդի նախագահի կնոջը: Այս փաստը վրդովեցնում է Ընկերության բաժնետեր Նորիկ Կիրակոսյանին, ով ժողովի ժամանակ հարցնում է, թե արդյոք առկա է անկախ գնահատողի

եզրակացություն վաճառված անշարժ գույքի շուկայական արժեքի վերաբերյալ: Ի պատասխան հարցադրմանը՝ Ընկերության տնօրենը տեղեկացնում է, որ գործարքը կնքվել է ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան, գործարքի վերաբերյալ դրական եզրակացություն է ներկայացրել Ընկերության խորհուրդը, և քվեարկությանը խորհրդի նախագահը՝ որպես շահագրգռվածություն ունեցող անձ, չի մասնակցել, իսկ ինչ վերաբերում է եզրակացությանը, ապա անկախ գնահատողի եզրակացության կարիք չի եղել, քանի որ անշարժ գույքը վաճառվել է հաշվեկշռային արժեքից ավելի բարձր արժեքով: Նորիկ Կիրակոսյանը նշում է, որ Ընկերության խորհրդի նախագահը իր պաշտոնական դիրքն օգտագործելով ներազդել է խորհրդի մյուս անդամների վրա և ի վնաս Ընկերության՝ հօգուտ իր ամուսնու ապօրինի գործողություններ է իրականացրել: Ուստի ժողովը պետք է համապատասխան որոշում ընդունի չեղարկելու այդ գործարքը: Գործարքի չեղարկման օգտին քվեարկում են Նորիկ Կիրակոսյանը և Վիգեն Նիկողոսյանը: Օրակարգի հաջորդ հարցի՝ Ընկերության խորհրդի անդամների ընտրության ժամանակ Վիգեն Նիկողոսյանը առաջարկում է լուծարել խորհուրդը, որպեսզի հետագայում բացառվեն նախորդ հարցի քննարկման ժամանակ բացահայտված չարաշահումները: Արա Նավասարդյանը նշում է, որ բաժնետիրական ընկերությունների համար խորհուրդ ունենալն օրենսդրության պահանջ է, ուստի իրենք հնարավորություն չունեն լուծարել կառավարման այդ մարմինը: Նորիկ Կիրակոսյանին ասում է, որ ինքն անձամբ պետք է անպայման լինի խորհրդի կազմում և պնդում է, որ որպես Ընկերության բաժնետեր, խորհրդի կազմում պետք է ընդգրկվի առանց քվեարկության:

Հարց 1. Քննարկեք Ընկերությանը պատկանող անշարժ գույքի վաճառքի օրինականությունը՝ անդրադառնալով Նորիկ Կիրակոսյանի և Ընկերության տնօրենի բերած փաստարկներին: /5 միավոր/

Հարց 2. Իրավունք ունե՞ր արդյոք Ընկերության ժողովը անշարժ գույքի վաճառքի գործարքը չեղարկել: /3 միավոր/

Հարց 3. Ներկայացրեք Ընկերության խորհրդի առնչությամբ կողմերի կողմից ներկայացված տեսակետների իրավական հիմնավորվածությունը: Արդյո՞ք Նորիկ Կիրակոսյանը իրավունք ունի առանց քվեարկության ընդգրկվել խորհրդի կազմում: /5 միավոր/

Խնդիր 3. /14 միավոր/

2023 թվականի փետրվարի 8-ին ՀՀ քաղաքացի Արթուր Ղուկասյանը դիմում է դատարան՝ Արտաշես Համբարձումյանից պահանջելով իրենց միջև կնքված փոխառության պայմանագրից բխող փոխառության գումարը, ինչպես նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով հաշվեգրված տոկոսները:

Դատարանում իր հայցադիմումի հիմքում Արթուր Ղուկասյանը ներկայացրել է փաստարկներ, համաձայն որոնց՝ 2022 օգոստոսի 18-ին իր և Արտաշես Համբարձումյանի միջև կնքվել է

փոխառության պայմանագիր, որով Արթուր Ղուկասյանը 5 ամիս ժամկետով պարտավորվել է Արտաշես Համբարձումյանին պարտքով տրամադրել 3 650 000 դրամ գումար ավտոմեքենա գնելու նպատակով, իսկ Արտաշես Համբարձումյանը պարտավորվել է 5 ամիս անց վերադարձնել գումարը և վճարել տոկոսներ՝ յուրաքանչյուր ամիս 31 % չափով: Փոխառության գումարը Արթուրը Արտաշեսին հանձնել է 2022 թվականի սեպտեմբերի 10-ին՝ ստացականի հիման վրա: Արտաշեսը մինչև հայցադիմումի ներկայացման պահը չի վերադարձրել փոխառության գումարը և դրա վրա հաշվեգրված տոկոսները՝ ամսական 31% չափով:

Դատական նիստի ժամանակ Արտաշեսը ներկայացնում է որոշակի հակափաստարկներ, որոնք էական նշանակություն ունեն երկու կողմերի միջև ծագած իրավահարաբերության բացահայտման տեսանկյունից: Մասնավորապես, Արտաշեսը նշում է, որ ստացականում նշվել է 3 650 000 դրամ գումար, սակայն իրականում Արթուրը Արտաշեսին հանձնել է 650 000 ՀՀ դրամի չափով գումար: Ըստ վերջինի՝ ստացականում 3 650 000 ՀՀ դրամի չափով գումարը նշվել է, քանի որ իրականում իր նկատմամբ բռնություն է տեղի ունեցել և ստիպված այդ գումարի չափն է նշվել: Արթուրի բռնության մասին կարող են հիմնավորել գումարը ստանալու պահին մոտ գտնվող խանութի աշխատակիցները, ովքեր այդ պահին նկատել էին բռնության փաստ: Ինչ վերաբերում է տոկոսների հաշվարկին, ապա այն հակասում է օրենքին, իսկ փոխառության պայմանագիրը պետք է համարել չկնքված: Նաև կողմերի միջև առկա է հաշվանցի հնարավորություն, քանի որ իր և Արթուրի միջև դեռևս 2014 թվականին կնքվել է շարժական գույքի առուծախի պայմանագիր, իսկ Արթուրը չի վճարել վաճառված ապրանքի գնից 320 000 ՀՀ դրամը, որը պետք է վճարեր մինչև 28.12.2015 թվականը:

Հարց 1. Ներկայացրեք կողմերի միջև առկա իրավահարաբերությունների բնույթը: Որքանով են իրավաչափ են Արթուրի փաստարկները և Արտաշեսի հակափաստարկները: Հիմնավորե՛ք Ձեր պատասխանը: /9 միավոր/

Հարց 2. Ներկայացրեք փոխառուի կողմից փոխառության պայմանագիրը խախտելու հետևանքները, ինչպես նաև փոխառության պայմանագրերի տեսակները /ձևերը/՝ իրենց բովանդակությամբ: /5 միավոր/

Խնդիր 4. /10 միավոր/

«Նյու Թաուն» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Գնորդ) և «Բիլակ» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Մատակարար) միջև դեռևս շատ վաղուց գործընկերային հարաբերություններ են եղել: Դեռևս 2012 թվականից Բիլակ ընկերությունը տարբեր տեսակի ապրանքներ է մատկարարել «Նյու Թաուն» ՍՊԸ-ին: Համաձայն վերջիններիս միջև 2015 թվականի մատակարարման պայմանագրի՝ Մատակարարը պարտավորվել էր ամսական պարբերականությամբ մինչև 2022 թվականի դեկտեմբերի 15-ը Գնորդին մատակարարել պողպատյա խողովակներ (այսուհետ նաև՝ Ապրանքներ): Միաժամանակ, Գնորդը պայմանագրեր էր կնքել մեկ այլ «X» ընկերության (այսուհետ նաև՝ Պատվիրատուի) հետ, որոնցով պարտավորվել էր իր կողմից ձեռքբերված պողպատյա խողովակները վաճառել վերջինիս՝ փոխադրման ծառայությունների մատուցման պայմանագրեր կնքելով մի շարք անձանց հետ: Սակայն 2022 թվականի մայիսի 17-ին Մատակարարի համապատասխան տեխնիկան, որը վերջինիս ամենախոշոր տեխնիկան էր, աշխատակցի կողմից անփույթ գործածելու հետևանքով խափանվում

է, ինչի արդյունքում Մատակարարը մինչև 2022 թվականի դեկտեմբերի 15-ը չի կատարում իր պայմանագրային պարտավորությունները: Արդյունքում, Գնորդը 2022 թվականի հունիսի 17-ին գրավոր նամակով դիմում է Մատակարարին՝ պարզելու, թե ինչ փուլում է գտնվում Ապրանքների մատակարարումը և հայտնում, որ Պատվիրատուն պատրաստվում է իր նկատմամբ կիրառելու պատասխանատվության միջոցներ:

2022 թվականի հունիսի 18-ին ներկայացված պատասխանով Գնորդը հայտնում է Մատակարարի հետ տեղի ունեցածը և ներկայացնում, թե ինչու չի կարողանում տվյալ պահին մատակարարել համապատասխան Ապրանքները: 2022 թվականի հունիսի 20-ին Պատվիրատուն նշում է, որ ինքը պատրաստ է ընդունելու այլ մատակարարի: Սակայն Գնորդը իր նամակում նշում է, որ Բիլակ ընկերության հետ վերջինս ունի բազմամյա փորձ և կսպասի մինչև Մատակարարը կվերականգնի իր բնականոն գործունեությունը:

Այնուամենայնիվ, Պատվիրատուն Գնորդի նկատմամբ հաշվարկում է տույժեր և պահանջում խնդրին տալ հստակ լուծում: Արդյունքում, հաշվեգրված տույժերի ընդհանուր չափը առ 2022 թվականի դեկտեմբերի 27-ի դրությամբ կազմում է մոտ 3,000,000 ՀՀ դրամ: Գնորդը ընդունելով Պատվիրատուի հանդեպ ունեցած բոլոր վճարային պարտավորություններն ու դրանց կետանցման փաստը, այնուհանդերձ խնդրում է տրամադրել հավելյալ ժամանակ՝ խնդիրների շտկման նպատակով: Այնուամենայնիվ՝ Պատվիրատուն սնանկության դիմում է ներկայացնում ՀՀ սնանկության դատարան՝ Գնորդին սնանկ ճանաչելու և իր պահանջների բավարարման նպատակով:

Հարց 1. Արդյո՞ք կողմերի պահանջները բխում են գործող օրենսդրական կարգավորումների տրամաբանությունից: Ներկայացնել կողմերի կողմից պատասխանատվություն կրելու սահմանները: /7 միավոր/

Հարց 2. Արդյո՞ք առկա էր սնանկության դիմում ներկայացնելու հիմքեր: Ներկայացնել սնանկ ճանաչվելու հիմքերը: /3 միավոր/